

Շիրվանղագէի լեզուն ճռիս չէ . նրա հայերէնը յաճախ կաղում է : Ոճը հատու է ու պատկերալից : Կենդանի ու զուսպ հեղնանքը առանձին աշխոյժ ու գրաւչութիւն են տալիս նրա գրւածքներին : Ռւժեղ է նրա երկախօսութիւնը : Նրա պատկերները գծւած են վարպետի լայն վրձինով , դոյների բազմազանութեամբ : Երկերի նիւթն ու դաղախալները մարդկային են , յառաջաղիմութեան աղբերից առնըւած , յաճախ , տիպական ու մնայուն :

Թէ որպէս արւեստագէտ եւ թէ իրրեւ ընկերային միջավայրը պատկերացնող , Շիրվանղագէն կը մնայ հայոց զրականութեան ամենաաչքի ընկնող դէմքերից մէկը , Սունդուկեանի ու Նար-Դոսի կողքին :

Ա . Վ .

ՓՐՕՖ . Ա . ՍՈՂԻԿԵԱՆ

Մայիս 28-ին , Հիւս . Ամերիկայի Բոչչութը քաղաքում , 83 տարեկանհասակում , վախճանել է Կարնի Սանասարեան դպրոցի հիմնադիր ու դեկադար երրորդութեան վերջին անդամը՝ Փրօֆ . Սարդուղիս Սողիկեանը : Հանգուցեալը Խարբերդցի էր : Ծնւած պէտք է լինի 1852-53 թւականներին : Նախնական կրթութիւնը ստանալով իր ծննդավայրում՝ պատահի հասակում , իրրեւ Մկրտիչ Սանասարեանի սաներից մէկը , ուղարկել էր Գերմանիա ուսումը կատարելազործելու համար :

Տասը տարի Գերմանիայում սովորելուց յետոյ , Սողիկեանը վերադարձաւ Թիւրքիա եւ Յ . Մատաթեանի ու Գ . Աբուլեանի հետ մասնակցեց Սանասարեան վարժարանի հիմնադրութեան եւ այնուշետեւ չուրջ 40 տարի ծառայեց այդ հաստատութեան , որպէս ուսուցիչ եւ դաստիարակ : Իր մասնագիտութիւնն էր՝ կրօն , լեզուներ , արւեստ : Բնաւորութեամբ մեղմ , դիւրահաղորդ , լայնօրէն զարդարած՝ Սողիկեանը ջերմօրէն սիրած էր թէ իր սաների , թէ պաշտօնակիցների , թէ դրսի հասարակութեան եւ թէ կառավարական շըրջանների կողմից : Սանասարեան դպրոցը իր յաջողութիւնների համար շատ բանով պարտական էր նրան :

1915-ի եղեռնից փրօֆ . Սողիկեանը աղատւեց հրաշքով - չնորհիւ գերման հիւպատոսի հետ ունեցած անձնական կապերի : Նոյն հիւպատոսի միջոցով աղատւեց եւ ուրիշ հայերի կեանքեր : Պատերազմից յետոյ գաղթեց Ամերիկա , ուր եւ վերջացրեց իր արդիւնաւոր կեանքը :

